



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N \_\_\_\_\_

\_\_\_\_\_ 2012 թ.

<Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ տնօրեն  
պարոն Ա.Միրզոյանին  
հասցե՝ ք.Երևան, Հ.Էմինի 15/8

Կից ուղարկվում է Ձեր գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/3 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման  
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

« Կարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/3

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 17.01.2012թ-ի նիստում քննության է առնվել «Վ.Գ. և որդիներ» ՍՊԸ գանգատը « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՏՏ 02.12.2011թ-ի թիվ 1001430 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Նշվեց նաև, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 27.01.2012թ. թիվ 3 որոշման սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու « օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 12.10.2011թ. թիվ 1001430 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Վ.Գ. և որդիներ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 02.12.2011թ-ին կազմվել է թիվ 1001430 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 23.967.487 դրամ:

Ստուգման ակտի 3-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունը 2008թ. մայիս և հունիս ամիսներին համաձայն «Եկամտահարկի մասին» « օրենքի 21 հոդվածի» որպես հարկային գործակալ չի հաշվարկել և բյուջե վճարել փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր 2577000 դրամ եկամտահարկի գումար:

Հիմք ընդունելով «Կարկերի մասին» « օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթներն ընդամենը 2008թ-ի համար լրացուցիչ գանձման է առաջադրվել եկամտահարկ՝ գումարով 5534107 դրամ:

Ընկերությունը 2009թ. հունիս ամսին վերը նշված սխալի հետևանքով պակաս է հաշվարկել 4740200 դրամ եկամտահարկի գումար:

Հիմք ընդունելով «Կարկերի մասին» « օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթներն ընդամենը 2009թ-ի համար լրացուցիչ գանձման է առաջադրվել եկամտահարկ՝ գումարով 10179580 դրամ:

Ընդամենը եկամտահարկի գծով ենթակա է լրացուցիչ բյուջե վճարման 15713687 դրամ:

«Վ.Գ. և որդիներ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 12.10.11թ. թիվ 1001430 հանձնարարագրի «Ստուգվող ժամանակաշրջանի սկիզբ» նշվել է 12.06.2006թ. և ստուգման ակտը գրվել է Ընկերության 12.06.2006թ-ից հետո կատարված խախտումների վերաբերյալ:

Ակտի 3-րդ կետի ուսումնասիրությունից պարզվում է, որ Ընկերության կողմից կատարված խախտումները վերաբերվում են 2008 թվականի մայիս և հունիս ամիսներին, կամ՝ ստուգման ակտով Ընկերությունից պահանջվում է վճարել 2008 թվականի մայիս և հունիս ամիսների համար հաշվարկված եկամտահարկը, դրա հիման վրա հաշվարկված տուգանքները և տույժերը:

«Կարկերի մասին» « օրենքի 30.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ

չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո»:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ <<աշվարկված հարկային պարտավորության գումարները չեն կարող նվազեցվել, իսկ հաշվանցվող գումարները չեն կարող ավելացվել եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի: Անկախ առանձին հարկատեսակների մասին օրենքով սահմանվածից՝ սույն մասում նշված ժամկետը լրանալուց հետո հարկային պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող հարկատեսակի հաշվարկներ (հայտարարագրեր) չեն կարող»:

<< վճռաբեկ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 28-ի 3-1772(ՎԴ) որոշմամբ արձանագրվել է, որ <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1 հոդվածը կիրառելի է հարկային պարտավորություններ հայտնաբերելու բոլոր դեպքերում՝ առանց բացառության:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1 հոդվածով ամրագրված դրույթներից և << վճռաբեկ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 28-ի 3-1772(ՎԴ) որոշումից հետևում է, որ Ընկերությունն իրավունք ունի չկատարել այն հարկային պարտավորությունները (որոնք նշված են ստուգման ակտի 3-րդ կետում), որոնց վճարման ժամկետից անցել է երեք տարի:

Քանի որ 2008 թվականի մայիս և հունիս ամիսներից (Ընկերության կողմից վճարումներ չկատարելու օրվանից) մինչև 02.12.2011թ-ը (ստուգման ակտը գրելու օրը) կազմում է ավելի քան 3 տարի, ապա <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1 հոդվածով ամրագրված դրույթներից հետևում է, որ ստուգման ակտի 3-րդ կետում նշվածներն Ընկերության համար հարկային պարտավորություններ չեն առաջացնում:

Ստուգման ակտի ուսումնասիրությունից պարզվում է, որ տեսուչները չեն պահպանել <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 8 հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 5 հոդվածի, 6 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ստուգման ակտը անվավեր ճանաչել:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, լսելով ընկերության ներկայացուցչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Գանգատում նշված այն պնդման վերաբերյալ, որ Ընկերության կողմից կատարված խախտումները վերաբերվում են 2008 թվականի մայիս և հունիս ամիսներին, որոնց համար համաձայն <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի պարտավորություններ չեն կարող առաջադրվել, նշվեց հետևյալը:

Համաձայն <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի. <<Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրացնելուց հետո»:

Քննարկվող դեպքում եկամտահարկի գծով խախտումներն ընկերության կողմից կատարվել են 2008թ-ին, իսկ խախտումները հայտնաբերվել են 02.12.2011թ-ին կազմված թիվ 1001430 ստուգման ակտով: Այսինքն, խախտումները հայտնաբերվել են մինչև դրանք կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման

կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 02.12.2011թ-ի թիվ 1001430 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ